

Սամվել Ա. Պողոսյան
Պատմ. գիտ. թեկնածու

ՄԵԳԻԴՈՅԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԳԵՈՆԸ

Թուրքական բանակի ջախջախումը Պաղեստինում,
Լիբանանում և Սիրիայում 1918 թ. աշնանը*

Մուտք

Առաջին համաշխարհային պատերազմի սանձազերծման հարյուրամյակը ողբերգական հիշողություններ է արթնացնում հայ ժողովրդի մոտ, որը պատերազմի տարիներին ենթարկվեց ցեղասպանության և կորցրեց իր հայրենիքի մեծագույն մասը: Դրա հետ մեկտեղ՝ մեր ժողովուրդը չի մոռանում պատերազմում իր լավագույն զավակների անօրինակ սխրանքներին մասին վկայող պատմության հերոսական էջերը:

Հայ պատմագիտությունը բավականին մեծ ուշադրություն է դարձրել Կովկասյան ճակատի ռազմագործողություններին՝ հայ կամավորների մասնակցությանը, սակայն անուշադրության է մատնել Պաղեստինյան ռազմաճակատը, որը նույնպես առնչվում էր հայության ճակատագրի հետ: Անտանտի զորքերի, հիմնականում բրիտանական ուժերի հարձակումները հանգեցնում էին Պաղեստինում, Հորդանանում, Սիրիայում տեղակայված հայ զաղթականների մնացորդների նոր ջարդերին, իսկ նրանց կողմից ազատագրված տարածքների հայերը փրկվում էին կոտորածների ու սովի ճիրաններից: Այս ուղղության վրա էր մարտնչում նաև ֆրանսիական դրոշի ներքո հանդես եկող Հայկական (Արևելյան) լեգեոնը, որի գլխավոր ձգտումն էր հնարավորինս շուտ հասնել ու ազատագրել Կիլիկիան:

Առաջին աշխարհամարտի կարևորագույն ռազմագործողություններից էր թուրքական Պաղեստինյան գորախմբի ամբողջական ոչնչացումը 1918 թ. սեպտեմբերին տեղի ունեցած Մեզիդոյի ճակատամարտում: Սա ռազմարվեստի պատմության մեջ մտած այն եզակի ճակատամարտերից

Հայ պատմագիտությունը բավականին մեծ ուշադրություն է դարձրել Կովկասյան ճակատի ռազմագործողություններին՝ հայ կամավորների մասնակցությանը, սակայն անուշադրության է մատնել Պաղեստինյան ռազմաճակատը, որը նույնպես առնչվում էր հայության ճակատագրի հետ: Անտանտի զորքերի, հիմնականում բրիտանական ուժերի հարձակումները հանգեցնում էին Պաղեստինում, Հորդանանում, Սիրիայում տեղակայված հայ զաղթականների մնացորդների նոր ջարդերին, իսկ նրանց կողմից ազատագրված տարածքների հայերը փրկվում էին կոտորածների ու սովի ճիրաններից: Այս ուղղության վրա էր մարտնչում նաև ֆրանսիական դրոշի ներքո հանդես եկող Հայկական (Արևելյան) լեգեոնը, որի գլխավոր ձգտումն էր հնարավորինս շուտ հասնել ու ազատագրել Կիլիկիան:

*Հոդվածն ընդունվել է տպագրության 30.03.2014:

է, որտեղ հնարավոր եղավ լիովին գաղտնի պահել գլխավոր հարվածի ուղղությունը, զորքերի տեղաշարժը և սերտ համագործակցություն ապահովել ավիացիայի ու հեծելազորի միջև: Այս ճակատամարտին Ռաֆաթ-Արարա տեղամասում մասնակցեց նաև Հայկական լեգեոնը: Դրանից հետո Օսմանյան կայսրությունը կորցրեց Լիբանանն ու Սիրիան, և գրկվելով կազմակերպված դիմադրություն ցույց տալու հնարավորություններից՝ ստիպված էր հաշտություն խնդրել և դուրս գալ պատերազմից:

1. Պաղեստինյան ռազմաճակատը 1918 թ. մարտ-օգոստոս ամիսներին

1917 թ. հունիսից Եգիպտական ռազմարշավային զորքերի գլխավոր հրամանատար դարձած գեներալ Էդմունդ Ալենբին 1918 թ. գարնան սկզբին Պաղեստինյան ճակատում բավական խոշոր և մարտունակ ուժեր էր կենտրոնացրել: Նրա տրամադրության տակ էին տարբեր ճակատներում մարտական փորձ ձեռք բերած 52-րդ (Շոտլանդական), 74-րդ (Յոմենների), 60-րդ (Լոնդոնյան), 10-րդ (Իռլանդական), 53-րդ (Ուելսյան), 54-րդ (Արևելյան Անգլիայի), 3-րդ (Լահորյան), 7-րդ (Միլոբյան) հետևակային դիվիզիաները, ընդհանուր առմամբ՝ 34 բրիտանական, 49 հնդկական և արևմտահնդկական գնդի 2 գումարտակ¹: Ռազմաճակատի գիծը ձգվում էր Միջերկրական ծովից մինչև Հորդանան գետ ու Մեռյալ ծով՝ շուրջ 100 կմ:

1918 թ. մարտի երկրորդ կեսին Է. Ալենբին նախատեսում էր Պաղեստինյան ռազմաճակատի արևելքում՝ Ամմանի ուղղությամբ, խոշոր հարձակում իրականացնել: Նա նպատակ ուներ անցնել Հորդանանի ձախ ափը, առաջանալ դեպի հյուսիս-արևելք, գրավել Էս Սալթը և Ամմանը: Դրանով բրիտանական զորքերը դուրս կգային Հեջազ տանող երկաթուղագիծ, որով կապ կհաստատվեր թուրքերի դեմ ապստամբած Մեքքայի շեյխի Հուսեյնի արաբական բանակի հետ:

Մարտի 8-12-ը բավական թեժ մարտեր ծավալվեցին Պաղեստինյան ռազմաճակատի հյուսիսարևելյան հատվածում՝ Ռամալլահից Նաբլուս գնացող ճանապարհի ուղղությամբ: Բրիտանական 10-րդ, 53-րդ և 74-րդ դիվիզիաները փորձեցին առաջանալ այդ ճանապարհով, որը շրջապատված էր լեռներով ու բլուրներով: Սակայն թուրքերը, ամրանալով բնականից անառիկ դիրքերում, համառ դիմադրություն ցույց տվեցին: 53-րդ դիվիզիան հաջողություն չունեցավ, իսկ մյուս դիվիզիաները կարողացան աննշան առաջխաղացում արձանագրել ու գրավել լեռնային որոշ դիրքեր²: Այս գործողությամբ Է. Ալենբին ստուգում էր թուրքերի դիմադրողական կարողությունները, միաժամանակ փորձում էր շեղել նրանց ուշադրությունը հիմնական հարվածի ուղղությունից:

Գլխավոր հարձակումը սկսվեց մարտի 21-ին: Բրիտանական զորքերը հաջողությամբ գետնանցեցին Հորդանանը և մարտերով շարժվեցին հյու-

1 Տե՛ս **Massey W. T.**, *Allenby's final triumph*, London, 1920, p. 23-24.

2 Տե՛ս նույն տեղում, էջ 81-85:

սիւս-արևելք: Մարտի 26-ին հաջողվեց գրավել Էս Սալթը³ և համառ մարտերով մոտենալ Ամմանին: Մարտի 30-ին Ամմանի մատույցներում տեղի ունեցավ խոշոր և վճռորոշ ճակատամարտ: Թուրքական 4-րդ բանակին հաջողվեց հետ մղել բրիտանացիների գրոհները: Շուտով թուրքերն Ամմանում համալրումներ ստացան երկաթուղով, իսկ Նաբլուսից դեպի Էս Սալթ շարժվեցին թուրքական 7-րդ բանակի օգնական ուժերը: Բրիտանացիները ստիպված էին դադարեցնել հարձակումը և ապրիլի 2-ին վերադարձան նախկին դիրքերը⁴: Փաստորեն, Ամմանի ուղղությամբ 12-օրյա հարձակումն ավարտվեց անհաջողությամբ:

Ճակատամարտի արդյունքում բրիտանացիները կորցրին 93 սպա և 1255 զինվոր: Կլիմայական պայմանների հետևանքով բավական մեծ թիվ էին կազմում նաև հիվանդները: Հոսպիտալացված վիրավոր և հիվանդ բրիտանական զինվորների թիվը կազմեց 1886 մարդ: Թուրքերը տվեցին մոտ 400 սպանված և 1000 վիրավոր: Գերվեցին 925 թուրքեր և 61 գերմանացիներ⁵:

Այս անհաջող հարձակումը բացասաբար անդրադարձավ պաղեստինա-հորդանանյան տարաձայնությունն ապաստանած հայ տարագիրների վրա: Ապրիլի 5-ին էս Սալթի մոտ գտնվող Այնի Սուվեյլան բնակավայրում գազազած չերթեգները որպես վրեժ սպանեցին 160 հայ գաղթականների: Նման ճակատագրի արժանացան նաև Ամմանի շրջակայքի բազմաթիվ հայեր⁶:

Այս ռազմագործողությունից հետո բրիտանական հրամանատարությունը հասկացավ, որ հաջողության հասնելու համար անհրաժեշտ է հարձակման անցնել նաև Պաղեստինյան ռազմաճակատի մյուս հատվածներում, որպեսզի հակառակորդին թույլ չտրվի ուժերը կենտրոնացնել Ամմանի ուղղությամբ: Չնայած է. Ալենբիի տրամադրության տակ կային բավարար ուժեր ամբողջ ճակատով հարձակվելու համար, սակայն նրա գործողությունները կասեցվեցին Եվրոպայից եկող անհանգստացնող լուրերով: Ամմանի ուղղությամբ հարձակման օրը՝ մարտի 21-ին, գերմանական հրամանատարությունը ֆրանսիական ճակատում լայնամասշտաբ գրոհ էր սկսել Սոմայի ուղղությամբ: Մարտի 3-ին Խորհրդային Ռուսաստանի հետ կնքած Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրից հետո գերմանացիները հնարավորություն էին ստացել ռուսական ճակատից մեծաքանակ զորքեր տեղափոխել արևմուտք: Նրանք հույս ունեին հզոր հարվածով ջախջախել բրիտանական և ֆրանսիական ուժերին և բեկում մտցնել պատերազմում: Գերմանական հրամանատարությունը այն կոչեց Կայզերսլախտ՝ Կայզերի ճակատամարտ: Չնայած սկզբնական հաջողություններին, մարտի 21-ից հուլիսի 4-ը տևած Սոմայի ճակատամարտում գերմանացիները չկարողացան հաղթանակի հասնել: Նրանք կորցրին 348.000 զինվոր, հակառակորդը՝ 328.000 (92.000 ֆրանսիացի,

3 Stuart **Cutlack F. M.**, *The Australian Flying Corps in the Western and Eastern theatres of War 1914–1918*, Sydney, 1941, p. 108.

4 Stiu Massey W. T., *Allenby's final triumph*, p. 34–56.

5 Տե՛ս նույն տեղում, էջ 57:

6 Տե՛ս **Պարթևեան Ս.**, Արարա: Հայկական լեզվոնր, Իգմիր, 1919, էջ 58:

236.000 բրիտանացի)⁷:

Սոմայի ճակատամարտը ստիպեց բրիտանացիներին Պաղեստինյան ուժերի մի մասն ուղարկել Ֆրանսիա, որով է. Ալենբիի հարձակումը հետաձգվեց: Շտապ կարգով ապրիլի սկզբին Պաղեստինից Սոմա մեկնեցին 52-րդ և 74-րդ դիվիզիաները, իսկ մինչև հունիսի կեսերը՝ նաև այլ դիվիզիաներից 25 գումարտակներ: Դրանք ամենամարտունակ զորամասերն էին, որոնց փոխարեն է. Ալենբին ստացավ դեռևս ամբողջությամբ չմարզված հնդկական նորակազմ զորամասեր⁸: Հետևաբար՝ Պաղեստինում լայնամասշտաբ հարձակումը հետաձգվեց մի քանի ամսով:

Է. Ալենբին նախատեսում էր Ամմանի ուղղությամբ հաջորդ հարձակումը սկսել մայիսի 20-ին: Սակայն արաբական Բենի Սախր ցեղի առաջնորդներից Ֆահադը պատվիրակություն ուղարկեց բրիտանացիների մոտ՝ տեղեկացնելու, որ իրենք 7.000 մարտիկ ունեն և պատրաստ են օգնելու, եթե հարձակումը սկսվի մինչև մայիսի 4-ը⁹: Է. Ալենբին ստիպված էր առաջաձգել հարձակումը, որպեսզի ապահովի արաբների համագործակցությունը, որովհետև արաբների հարձակումը կարող էր վճռել Ամմանի ճակատագիրը: Մեքքայի շերիֆ Հուսեյնի արաբական բանակում գործող բրիտանական գնդապետ **Թ. Լոուրենսը (Լոուրենս Արաբացի)**, տեղեկանալով այդ մասին, նախազգուշացրեց, որ Ֆահադը նույնիսկ 400 զինվոր չունի, իսկ նրա ցեղախումբը տեղափոխվել է հարավ: Նա գտնում էր, որ չպետք է հավատ ընծայել այդ «օղային խոստումներին»¹⁰: Սակայն Լոուրենսի զգուշացումը հաշվի չառնվեց:

Ապրիլի 30-ին բրիտանական ուժերը կրկին անցան Հորդանանը և առաջացան դեպի Էս Սալթ, որը գրավվեց հաջորդ օրը՝ մայիսի 1-ին¹¹: Թուրքերը Ամմանից և Նաբլուսից մեծաթիվ ուժեր նետեցին Էս Սալթի ուղղությամբ: Արաբներից այդպես էլ օգնություն չստանալով՝ բրիտանացիները մայիսի 3-ին թողեցին Էս Սալթը և նահանջեցին Հորդանանի արևմտյան ափ¹²: Ռազմագործողության արդյունքում բրիտանացիները կորցրին 1300 զինվոր: Թուրքերը նույնպես զգալի թվով սպանվածներ և վիրավորներ ունեցան: Գերվեցին թուրքական բանակի 46 սպաներ և 885 զինվորներ, որոնցից 47-ը՝ գերմանացի¹³: Դրանից հետո Պաղեստինյան ռազմաճակատում հարաբերական անդորր հաստատվեց: Ամբողջ ամառվա ընթացքում բրիտանացիներն ու թուրքերը միայն տեղային նշանակություն ունեցող մի քանի փոքր հարձակումներ կազմակերպեցին՝ փորձելով բարելավել իրենց դիրքերը:

Մայիսի վերջին և հունիսի 8-ին տեղի ունեցած մարտերի արդյունքում գեներալ-մայոր Վ. Ֆեյնի 7-րդ հնդկական դիվիզիան կարողացավ որոշ չափով առաջ տալ իր դիրքերը Միջերկրականի ափամերձ տարածքում¹⁴:

7 Տե՛ս <http://www.1914-1918.net/bat22.htm>

8 Տե՛ս **Massey W. T.**, *Allenby's final triumph*, p. 60.

9 Տե՛ս նույն տեղում, էջ 64:

10 **Lawrence T.E.**, *Seven Pillars of Wisdom*, Ware, Hertfordshire, 1997, p. 519-521.

11 Տե՛ս **Massey W. T.**, *Allenby's final triumph*, p. 65-66.

12 Տե՛ս **Cutlack F. M.**, *The Australian Flying Corps*, p. 115.

13 Տե՛ս **Massey W. T.**, *Allenby's final triumph*, p. 70.

14 Տե՛ս նույն տեղում, էջ 85-86:

Հուլիսի 14-ին թուրքական և գերմանական զորքերը գրոհեցին Մուսալաբեհի դիրքերի վրա՝ Աուջահ գետի ուղղությամբ, որպեսզի հին հռոմեական ճանապարհով դուրս գան դեպի Զերիկո: Հարձակման գլխավոր նպատակներից մեկը գետի գրավումն էր, քանի որ թուրքերը ջրի պակաս ունեին: Գերմանական 702-րդ, 703-րդ հետևակային, 11-րդ եգերական գումարտակները և թուրքական 24-րդ դիվիզիան հարձակվեցին գլխավոր ուղղությամբ: Հորդանանի կողմից նրանց աջակցելու էր թուրքական 53-րդ դիվիզիան: Գերմանացիները թուրքերին ոգևորելու համար լուրեր էին տարածել, որ հաղթանակը հեշտ է լինելու, որովհետև ավստրալացի ու նորգելանդացի զինվորները շոգերի պատճառով մեծ մասամբ հայտնվել են Երուսաղեմի հոսպիտալներում: Բրիտանական ուժերը կարողացան կասեցնել գերմանացիների առաջխաղացումը և պարտության մատնեցին նրանց:

Օգոստոսի 12-13-ը 20-րդ կորպուսի հնդկական նոր զորամասերը և իռլանդացիները գրոհեցին Էլ Բուրջից Խորաբեհ ձգվող մոտ 5 կմ երկարությամբ լեռնաշղթայի վրա: Այն բնական անառիկ դիրք ուներ, բավական լավ էր ամրացված թուրքերի կողմից: Բրիտանական ուժերը համառ մարտերից հետո գրավեցին այդ դիրքերը: Նրանք կորցրին 6 սպա և 101 զինվոր: Թուրքերը ունեցան 80 սպանված, 450 վիրավոր, 239-ը գերվեցին, ինչպես նաև թողեցին մեծաքանակ զենք և զինամթերք¹⁵:

Քանի որ պաղեստինյան բանակի մարտունակ զորամասերի զգալի մասը մեկնել էր Եվրոպա, և անհրաժեշտ էր նրանց փոխարինել նոր զորքերով՝ ռազմաճակատը չթուլացնելու նպատակով: Ուստի ֆրանսիական իշխանությունները ստիպված էին Արևելյան լեգեոնը Կիպրոսից տեղափոխել Պաղեստին, չնայած նախապես հայտարարել էին, որ հայկական զինուժն օգտագործելու են միայն Կիլիկիայի կամ Հյուսիսային Սիրիայի գրավման ժամանակ¹⁶: Ֆրանսիայի ռազմական նախարարի 1918 թ. մարտի 23-ի թիվ 2177-9/11 հրամանով Արևելյան լեգեոնը դուրս բերվեց ծովային ուժերի կազմից, դրվեց Պաղեստինի և Սիրիայի ֆրանսիական զորախմբի տրամադրության տակ¹⁷:

Մարտի 23-ին՝ Ս. Զատիկի առավոտյան, լեգեոնականները պաշտոնապես տեղեկացվեցին, որ Կիպրոսից մեկնելու են ռազմաճակատ: Երկար ամիսներ սպասված այդ լուրը մեծ ոգևորություն առաջացրեց: Տ. Պոյաձյանը նշում է. «Մէկ-երկու օրէն պիտի մեկնէինք, պիտի հեռանայինք մեզի զգուելի դարձած այդ կղզիէն որ մեզ շղթայած էր ամիսներով: Բանակին մէջ ստեղծուած եռուզեռն աննկարագրելի էր: Զիրար կը շնորհաւորէինք այս բաղդաւոր պատեհութեան համար որ մեզ պիտի տանէր վերջապէս մեր թշնամիին դիմաց, մղելու համար կռիւր վրէժին ու արդարութեան, կռիւր՝ մեր դարերով կորսուած հայրենիքին, կռիւր՝ մեր խոշտանգուած հայրերուն ու եղբայրներուն, մեր բռնաբարուած մայրերուն ու քոյրերուն,

15 Տե՛ս նույն տեղում, էջ 86-91:

16 Տե՛ս **Պեյլերյան Ա.**, Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918), հատ. Բ, Եր., 2005, էջ 72:

17 Տե՛ս **Գարամանուկեան Ա.**, Հայկական Լեգեոնը պատմական, իրաւական ու քաղաքական հարցերու լոյսին տակ և վաւերագրեր, «Հայկազեան հայագիտական հանդէս», հատ. Ե, Պէյրութ, 1974, էջ 77:

մեր բզբտուած մանչերուն և աղջիկներուն»¹⁸:

Ապրիլի վերջին լեգեոնի առաջին, իսկ մայիսի 9-ին երկրորդ գումարտակները Կիպրոսից տեղափոխվեցին Պորտ Սայիդ¹⁹: Կիպրոսում մնաց երրորդ գումարտակը՝ մայոր Շենոյի հրամանատարությամբ²⁰:

Մայիսի կեսերին լեգեոնը Պորտ Սայիդից գնացքով, ապա՝ հետիոտն հասավ Քանթարա, որի մի կողմում Սուեզի ջրանցքն էր, մյուս կողմում՝ անապատը: Այդտեղից 30 կմ հարավ գտնվող Իսմայիլիայի մոտ՝ էլ Թիհ անապատի ավազների վրա, հաստատվեց լեգեոնի բանակատեղին: Իսմայիլիայում մարզումները շարունակվեցին մայիսի 20-ից հուլիսի 12-ը²¹: Ապա Արևելյան լեգեոնը տեղափոխվեց Պաղեստինյան ռազմաձևակառույցի առաջավոր գիծ:

2. Մեգիդոյի ճակատամարտը (1918 թ. սեպտեմբերի 19-25)

Պաղեստինյան ռազմաձևակառույցի խոշորագույն և վճռորոշ ճակատամարտը հայտնի է **Մեգիդոյի** կամ **Արմազեդոնի** ճակատամարտ անունով: Է. Ալենքին այդ վճռորոշ ռազմագործողությունը կոչեց Մեգիդո, քանի որ գլխավոր նպատակն էր դուրս գալ Նաբլուսի և Տիբերիական (Գալիլեա) լճի միջև գտնվող Թիլ Մեգիդոյի դաշտը, որը աստվածաշնչյան **Արմազեդոն** էր, թեև այդ շրջանում կոչվում էր Էսդրաելոնի դաշտ, որով անցնում էր դեպի Նազարեթ գնացող ռազմավարական ճանապարհը, այդտեղ էր նաև Աֆուլայի երկաթուղային հանգույցը:

Ճակատամարտի նախօրեին Պաղեստինյան ռազմաձևակառույցի բրիտանա-ֆրանսիական և թուրք-գերմանական բանակների շփման գիծն անցնում էր Երուսաղեմ ու Նաբլուս քաղաքների միջև ընկած շրջանով և ձգվում էր Հորդանան գետից մինչև Միջերկրական ծով: Թուրքերը հույս ունեին, որ կարող են հետ մղել հակառակորդին՝ կառչելով Սամարիայի լեռնային, բնականից անառիկ դիրքերին, որոնք էլ ավելի էին ամրացվել գերմանական մասնագետների կողմից: Թուրքիայի ռազմական նախարար Էնվերը մեծ հույսեր էր կապում պաշտպանական այդ հզոր գծի հետ և այն անվանում էր երկրորդ Դարդանել²²:

Գեներալ Է. Ալենքին որոշեց թշնամուն վճռորոշ հարված հասցնել սեպտեմբերին: Տեղանքը հիմնականում լեռնային էր, և հակառակորդի դիրքերը գրավելը մեծ դժվարությունների ու զոհերի հետ էր կապված, ուստի նույնիսկ հաջողության դեպքում՝ նահանջից հետո, հակառակորդը կգբաղեցներ նոր պաշտպանական գիծ: Այդ պատճառով Է. Ալենքին որոշեց այնպիսի հարված հասցնել, որն ամբողջությամբ կջախջախեր թշնամուն և թույլ չէր տա պաշտպանության նոր գիծ ստեղծել:

18 Տե՛ս Պոլաճեան Ս., Հայկական լեգեոնը: Պատմական Յուշագրություն, Ուօթթաուն, 1965, էջ 93:

19 Տե՛ս Գասպարյան Ռ., Հայկական լեգեոնը (1916-1920 թթ.), «Հայկական բանակ», Եր., 1996, N 1, էջ 8:

20 Տե՛ս Պոլաճեան Ս., Հայկական լեգեոնը, էջ 94:

21 Տե՛ս նույն տեղում, էջ 100-103:

22 Տե՛ս Կամաուորը (Արաբայի յաղթանակի 10-րդ տարեդարձի առթիւ), հրատարակություն Գահիրէի Հայ Լեգեոնական Միութեան, Գահիրէ, 1928, էջ 34:

Վճռական հարձակման հաջողությունը հիմնականում կախված էր գլխավոր հարվածի համար ընտրված ուղղության անսպասելիությունից, հանկարծակիությունից և ուժգնությունից: Թուրքական զորախմբի հրամանատար, գերմանացի գեներալ Լիման ֆոն Սանդերսը հիմնական հարձակումը սպասում էր ռազմաճակատի արևելքից՝ Ամմանի ուղղությամբ, քանզի նախկինում հենց այս թևից էին բրիտանական ուժերը հուժկու գրոհներ կազմակերպել: Սակայն այս անգամ Ալենբին որոշեց հարվածն իրականացնել ռազմաճակատի ամենաարևմտյան հատվածից: Նա որոշեց Միջերկրականի առափնյա շրջանով՝ Սարոնի դաշտով, հեծելազորի սրընթաց գրոհով ձեռքել հակառակորդի պաշտպանական գիծը, դուրս գալ թշնամու թիկունք, գրավել Հայֆան ու Նաբլուսը, որով կկտրվեր Պաղեստինի թուրքական ուժերի նահանջի ճանապարհը: Իսկ Ամմանից Դամասկոս երկաթուղային ճանապարհով թուրքերի նահանջի ուղին փակելու էր Մեքքայի շերիֆ Հուսեյնի որդի Էմիր Ֆեյսալի արաբական բանակը: Փաստորեն, Ալենբին որոշեց թուրքական պաղեստինյան բանակը վերցնել շրջապատման մեջ և ամբողջությամբ ոչնչացնել, որի արդյունքում հակառակորդը այլևս չէր կարողանա որևէ լուրջ դիմադրություն ցույց տալ դեպի Լիբանան ու Սիրիա շարժվող բրիտանական ուժերին:

Պաղեստինյան ռազմաճակատում ձեռք բերված սեպտեմբերյան խոշոր հաղթանակի գործում անուրանալի դեր ունեցավ այն հանգամանքը, որ բրիտանական հրամանատարությունը կարողացավ գաղտնի պահել հարվածի գլխավոր ուղղությունը և զորքերի բոլոր տեղաշարժերը:

Եգիպտական ռազմարշավային կորպուսում լոնդոնյան լրատվամիջոցների պաշտոնական թղթակից Վիլյամ Մեսին իր գրքում խոստովանում է, որ զորքերի քողարկումն այնքան լավ էր կազմակերպված, և հրամանատարությունն այնքան գաղտնի էր մշակել հարձակողական պլանները, որ ինքը, գրեթե մշտապես գտնվելով գլխավոր շտաբում և բազմիցս այցելելով տարբեր զորամասեր, միայն հարձակումից մեկ օր առաջ տեղեկացավ զորքերի տեղաշարժի և վճռական հարձակման մասին, այն էլ՝ հրամանատարությունից²³:

Ռազմաճակատի արևելքից զորքերի հիմնական մասը՝ Անապատային հեծյալ կորպուսի 4 դիվիզիաներից 3-ը, քողարկված և չափազանց գաղտնիության պայմաններում է. Ալենբին նետեց արևմուտք: Հորդանանի հովտում թողնվեցին նրանց դատարկ վրանները, տեղադրվեցին կտորից պատրաստված ձիերի խրտվիլակներ: Քողարկումը այնքան հմտորեն էր արված, որ սեպտեմբերի 17-ին տարածքը վերևից հետախուզած գերմանական օդաչուն իր հրամանատարությանը տեղեկացնում էր, որ Հորդանանի հովտում կենտրոնացված են ավելի քան 23 հեծյալ էսկադրոններ²⁴:

Անապատային հեծյալ կորպուսի հիմնական ուժերը խիստ գաղտնիության պայմաններում տեղափոխվեցին գրեթե 100 կմ ձգվող ռազմաճակատի մի ծայրից մյուսը և տեղակայվեցին 21-րդ կորպուսի թիկունքում: Ռազմաճակատի արևմտյան հատվածում ամեն ինչ արտաքինապես

23 Տե՛ս Massey W. T., Allenby's final triumph, p. 96.

24 Տե՛ս նույն տեղում, էջ 97:

թողնվեց այնպես, ինչպես կար: Այնտեղ տեղափոխված գորքերին արգելված էր ցերեկով տեղաշարժվելը կամ գիշերով խարույկ վառելը: Բանակային վառարանները ճաշը պատրաստում էին չոր սպիրտով, որպեսզի ծուխը չնկատվի: Ստեղծվեց հատուկ հեծյալ ոստիկանություն, որը հսկում էր, որպեսզի զինվորները խստորեն պահպանեին անվտանգության կանոնները և չնկատվեին թշնամու դիրքերից կամ օդանավերից: Ձիերին ջուր տալու և մարզելու համար թաքստոցներից հանում էին կեսօրից մինչև ժամը 2-ը: Այդ ժամերին բրիտանական օդանավերը մարտական հերթապահություն էին իրականացնում, և թշնամու օդանավերը չէին կարող տեսնել ձիերին: Հեռախոսով կամ հեռագրով գորքերի տեղաշարժի մասին ցանկացած տեղեկության փոխանցումը արգելվեց: Թշնամուն մոլորեցնելու համար 3-րդ և 7-րդ դիվիզիաները սեպտեմբերի սկզբներին ցուցադրաբար արևմտյան ռազմաձևակառուցի շարժվեցին դեպի արևելք: Այդ դիվիզիաների զորամասերը ցերեկով մեկնում էին Լյուդի երկաթուղային կայարան, իսկ գիշերվա քողի տակ վերադառնում էին հետ²⁵:

Է. Ալենբիին հաջողվեց գորքերի տեղաշարժերն աննկատ իրականացնել և հարձակման հիմնական ուղղությունը գաղտնի պահել: Այսպես՝ գերմանական ինքնաթիռը սեպտեմբերի 18-ին հետախուզական թռիչք իրականացրեց, սակայն օդաչուն որևէ տեղաշարժ և գորքերի նոր կենտրոնացում չկարողացավ հայտնաբերել: Միայն ֆրանսիական զորախմբի կազմում նա նկատել էր Հայկական լեգեոնի համալրումը, որը համարել էր իտալական զորամաս²⁶:

Սեպտեմբերի 19-ին սկսված Մեզիդոյի ճակատամարտի նախօրյակին Պաղեստինյան ռազմաձևակառուցի գիծը Միջերկրականի ափից ձգվում էր մինչև Մեռյալ ծով՝ մոտ 95 կմ: **Տարբեր աղբյուրների համադրմամբ հստակեցնենք ռազմաձևակառուցի գծում բրիտանական և թուրքական գորքերի, ինչպես նաև հայկական զորամասի տեղաբաշխումը և նրանց առջև դրված խնդիրները**²⁷:

Բացի Միջերկրական ծովին հարող նեղ հատվածից՝ Սարոնի դաշտից, որը Բիր Ջեյթ բնակավայրից ձգվում էր մինչև Ռոշ Հաային, մնացած տարածքները լեռնային կտրատված տեղանք էին, ուր թուրք-գերմանական ուժերը հաջողությամբ կարող էին կասեցնել հակառակորդին: Եգիպտական ռազմարշավային զորքերը կազմված էին երեք կորպուսներից՝ Անապատային հեծյալ (հրամ. ավստրալացի գեներալ-լեյտենանտ Հենրի Շոլվել), 21-րդ (հրամ. գեներալ-լեյտենանտ Էդուարդ Բուլֆին), 20-րդ (հրամ. գեներալ-լեյտենանտ Ֆիլիպ Չեթվուդ) և գեներալ Է. Չայթորսի զորախմբից:


Լիման ֆոն Սանդերսի ղեկավարած թուրքական «Յըլդըրըմ» («Կայծակ») զորամիավորումը կազմված էր 4-րդ (հրամ. Մերսինլի Մեհմեդ Ջեմալ փաշա), 7-րդ (հրամ. Մուստաֆա Քեմալ փաշա), 8-րդ (հրամ. Իսմայիլ Ջևադ Չոբանլի փաշա) բանակներից: 8-րդ բանակի կազմի մեջ

25 Տե՛ս նույն տեղում, էջ 98, 99, 102:

26 Տե՛ս **Պոյաձեան Տ.**, Հայկական լեգեոնը, էջ 146:

27 Տե՛ս **Massey W. T.**, Allenby's final triumph, p. 111-112, 126-129, 147: **Պոյաձեան Տ.**, Հայկական լեգեոնը, էջ 144-145:

էր գերմանական «Ասիա» կորպուսը (հրամ. Գուստավ ֆոն Օպեն), որն աչքի էր ընկնում բարձր մարտունակությամբ: Այդ գերմանական զորախումբն ուներ 5 գումարտակներ՝ 48 գնդացիներով, 3 հրետանային մարտկոց՝ յուրաքանչյուրը 4 հրանոթով, հեծյալ էսկադրոն, գնդացրային ջոկատ, հետախուզական ջոկատ, ինքնաթիռներ և այլ ստորաբաժանումներ²⁸:



Քարտեզ 1: Մեզիդո, 19 սեպտեմբեր 1918 թ.

Բրիտանական 21-րդ կորպուսի հարձակման գիծը ձգվում էր 34 կմ՝ Բիր Ջեյթից մինչև Ռաֆաթ: Միջերկրականին հարող 3 կմ-ոց հատվածում, որը սկսվում էր Յաֆայից (ներկայիս՝ Թել Ավիվ) հյուսիս ընկած Բիր Ջեյթ բնակավայրից և ձգվում էր արևելքում մինչև Ռոշ Հաային, տեղակայված էր 60-րդ Լոնդոնյան դիվիզիան (հրամ. գեներալ-մայոր Ջոն Շի), որի մեջ էր նաև 5-րդ Ավստրալական թեթև հեծելազորային բրիգադը (հրամ. բրիգադի գեներալ Ջեյմս Մաքարթուր-Օնսլոու): Սա փաստորեն գլխավոր ուղղությունն էր: Այդ զորախմբի առջև խնդիր էր դրված ծովափի երկայնքով գրավել հակառակորդի երեք շարք խորությամբ պաշտպանության գիծը, որպեսզի հեծելազորային դիվիզիաները Սարոնի դաշտավայրով սրընթաց ներխուժեին թշնամու թիկունք:

7-րդ Միրության դիվիզիան (հրամ. գեներալ-մայոր Վիր Ֆեյն) զբաղեցնում էր 5 կմ-ոց հատված: Այս դիվիզիայի առջև ընկած էր արևելքից արևմուտք ձգվող գետակների հուներով կտրատված տեղանք, որը հա-

28 Տե՛ս <http://web.archive.org/web/20110605134841/http://www.sacktrick.com/igu/germancolonialuniforms/hist%20ottoman.htm>

կառավարողը բավական լավ ամրացրել էր խրամատներով ու գնդացիր-ներով: Միայն մի գետակ կար, որը հոսում էր հյուսիսից հարավ: Որոշվեց դրա հունի երկայնքով հարձակվել 7.5 կմ հեռավորության վրա գտնվող էթ Թիրեհի ուղղությամբ, ուր գտնվում էր թուրքական 22-րդ կորպուսի (հրամ. Ռեֆեթ բեյ) կենտրոնը: Հետևագործի միջոցով ճանապարհը բացելուց հետո պետք է 5-րդ Ավստրալական հեծյալ բրիգադը հարձակման գնար դեպի Թուլկարն, ուր տեղակայված էր թուրքական 8-րդ բանակի շտաբը:

75-րդ դիվիզիայի (հրամ. գեներալ-մայոր Ֆիլիպ Փալին) առջև 1.7 կմ լայնությամբ բավական նեղ, սակայն խրամատներով ու փշալարերով չափազանց լավ ամրացված տարածք էր: Նա նույնպես պետք է ձանապարհ բացեր դեպի էթ Թիրեհ և փակեր թշնամու նահանջի ուղին: Իր խնդիրը կատարելուց հետո 75-րդ դիվիզիան մնալու էր պահեստագործում:

3-րդ Լահորյան դիվիզիային (հրամ. գեներալ-մայոր Ա. Հոսկինս) բաժին էր հասել 10.3 կմ լայնությամբ գիծ: Այն առաջ էր շարժվելու Հադ-րահ-էթ Թիրեհ ճանապարհի երկայնքով: Նրա ուղին փակում էին երկու չափազանց լավ ամրացված կետեր:

Ռազմաճակատի մյուս տեղամասերը լեռնային շրջաններ էին: Քաֆր Քասիմից սկսվում էին այդ դժվարամատչելի շրջանները: Սակայն է. Ալենբին թշնամուն թյուրիմացության մեջ գցելու համար առաջին հարվածը հասցնելու էր այդ լեռնային տարածքներում:

54-րդ դիվիզիան (հրամ. գեներալ-մայոր Մոյուարդ Հեյր) զբաղեցնում էր Քաֆր Քասիմից մինչև Զավիա ընկած 8.7 կմ տարածքը:

Միջերկրականի և Զավիայի միջև կանգնած էին թուրքական 22-րդ կորպուսի 7-րդ և 20-րդ դիվիզիաները: Նրանց թիկունքում, որպես պահեստային ուժ, կանգնած էր 46-րդ դիվիզիան: Փաստորեն, թուրքական ընդամենը 3 դիվիզիաներ էին գտնվում 21-րդ կորպուսի 5 դիվիզիաների և նրանց թիկունքից հարձակման գնացող Անապատային հեծյալ կորպուսի 3 դիվիզիաների դիմաց:

54-րդ դիվիզիայի կազմում էր նաև Զավիայից մինչև Ռաֆաթ-Արարա բարձունքները 5.3 կմ լայնությամբ տարածքը զբաղեցրած Պաղեստինի և Սիրիայի ֆրանսիական զորախումբը (հրամ. գնդապետ Ֆ. դը Պիեպապ): Այն կազմված էր Արևելյան լեզեոնի հայկական 1-ին և 2-րդ գումարտակներից, սիրիացիների մեկ վաշտից, Ալժիրյան հրացանակիրների 1-ին գնդի 7-րդ և 2-րդ գնդի 9-րդ գումարտակներից, հեծյալ էսկադրոնից:

Անապատային հեծյալ կորպուսը, որի մեջ էին 4-րդ, 5-րդ հեծելազորային և Ավստրալական հեծյալ դիվիզիաները, կանգնած էր 21-րդ կորպուսի թիկունքում: Վերջինիս խնդիրն էր ջախջախել թշնամու աջ թևը և հասնել Դեյր Շարաֆ-Սամարիա-Թուլկարն գծին: Հետևագործի ուժերով հակառակորդի պաշտպանությունը ձեռքբերելուց հետո Անապատային հեծյալ կորպուսը պետք է ձախից շրջանցեր 21-րդ կորպուսին և սրընթաց գրոհեր Աֆուլայի և Բեյսանի վրա՝ կտրելով հակառակորդի երկաթուղային ուղին և փակելով նրա նահանջի ճանապարհը:

20-րդ կորպուսը պետք է գրոհեր Ռաֆաթից-Բեյթ Լաբան գծի վրա: Նրա գլխավոր խնդիրն էր Նաբլուսի ճանապարհով առաջանալ և այդ

քաղաքից հարավ միանալ 21-րդ կորպուսի զորքերին: 20-րդ կորպուսի երկու դիվիզիաների առջև ընկած էր հիմնականում լեռնային, բավական երկար՝ մոտ 40 կմ ձգվող գիծ: Արարայից Քաֆր ալ-Դիք հատվածը զբաղեցրեց 10-րդ դիվիզիան: Բերութիւնից մինչև Բեյթ Լաբան կանգնած էր 53-րդ դիվիզիան:

Զավիայից մինչև Բերութին ձգվող լեռնային հատվածում կանգնած էին թուրքական Չախակոդյան կորպուսի 19-րդ, 16-րդ հետևակային, 2-րդ հեծելազորային դիվիզիաները և գերմանական «Ասիա» կորպուսը, Բերութիւնից Բեյթ Լաբան՝ 3-րդ կորպուսի (հրամ. Իսմեթ բեյ) 1-ին, 11-րդ դիվիզիաները և 20-րդ կորպուսի (հրամ. Ալի Ֆուադ բեյ) 26-րդ դիվիզիաները:

Ռազմաճակատի արևելյան՝ մոտ 21 կմ հատվածը հանձնված էր գեներալ-մայոր Էդուարդ Չայթորսի 11.000-ոց զորախմբին, որի մեջ էին Ավստրալական և նորգելանդական հեծյալ դիվիզիան և երկու հետևակային բրիգադներ: Է. Չայթորսի զորախումբը պետք է Հորդանանի հովտում՝ Մեռյալ ծովից մինչև Էլ Մուդեյր ընկած տարածքում, լարվածության մեջ պահեր թուրքերին՝ նրանց ապակողմնորոշելով, որ իբր հարվածի գլխավոր ուղղությունն այդտեղից է լինելու:

Ռազմաճակատի արևելքում՝ Չայթորսի զորախմբի դիմաց, որտեղից Լիման ֆոն Սանդերսը թյուրիմացաբար սպասում էր գլխավոր հարվածը, կանգնած էին թուրքական 7 դիվիզիաներ. 4-րդ բանակի 2-րդ (հրամ. Գալաթալի Շևքեթ բեյ), 8-րդ (հրամ. Յասին Հիլմի բեյ) կորպուսները, Հորդանանյան զորախումբը՝ յուրաքանչյուրը 2 դիվիզիաներով, 7-րդ բանակի 20-րդ կորպուսի 53-րդ դիվիզիան:

Լիման ֆոն Սանդերսի 50.000 զինվորների ու 367 թնդանոթների դեմ կանգնած էին բրիտանական 76.000 զինվոր՝ 540 թնդանոթներով, այդ թվում՝ գնդապետ դը Պիեպպայի ղեկավարած Պաղեստինի և Սիրիայի ֆրանսիական 7.000-ոց զորախումբը, որի մեջ էին Արևելյան լեգեոնը, ալժիրցի հրացանակիրները, երեք հրետանային մարտկոցներ, մեկ հեծյալ էսկադրոն՝ Լը Բոնի գլխավորությամբ²⁹:

1918 թ. սեպտեմբերի 18-ի լույս 19-ի գիշերը սկսվեց Մեզիդոյի ճակատամարտը, որը վճռելու էր Պաղեստինյան ռազմաճակատի ճակատագիրը: Հարձակման համար ընտրված էր 4.30 ժամ, երբ լուսինը այլևս չէր լուսավորի և հնարավոր կլիներ հետևակը հնարավորինս մոտեցնել թշնամու դիրքերին՝ անսպասելի ու սրընթաց գրոհի համար: Դա թույլ կտար հնարավորինս նվազեցնել զոհերի քանակը: Առաջինը պետք է գրոհեր 54-րդ դիվիզիան, որի մեջ էր նաև ֆրանսիական զորախումբը: Նրանք հարձակման էին գնալու 10 ժամ շուտ՝ 4.20: Նրանց դիմաց լեռնային լավ ամրացված դիրքեր էին, և նրանք լեռների ստորոտներից պետք է առաջինը գնային հարձակման³⁰:

Հարձակումից առաջ՝ մեկն անց տասնհինգին, ավստրալացի օդաչու,

29 Տես Թորոսյան Շ., Կիլիկիայի հայերի ազգային-ազատագրական շարժումները 1919-1920, Եր., 1987, էջ 66-67: Պոլսաճեան Ս., Հայկական լեգեոնը, էջ 114: Massey W. T., Allenby's final triumph, 116.

30 Տես Massey W. T., Allenby's final triumph, p. 122.

կապիտան Ռոս Սմիթին հաջողվեց ոմբակոծել և ամբողջությամբ ավերել Աֆուլայում գտնվող հեռագրական կայանը: Քաղաքի ռազմավարական կետերի վրա նետվեցին 16 հատ 50 կգ-ոց ռումբեր: Դրա շնորհիվ թուրքական գլխավոր շտաբի հեռագրական և հեռախոսային կապը ռազմաձակատի հետ կտրվեց: Նաբլուսի շտաբը և կապի կետերը նույնպես ոմբակոծվեցին: Արդյունքում, թուրքական գլխավոր հրամանատարությունը երկու օր տեղյակ չէր, թե ինչ է կատարվում առաջին գծում³¹:

Համընդհանուր հարձակման ազդանշան հանդիսացավ հրետանային կրակը, որը հիմնականում ուղղված էր թուրքերի գլխավոր կրակակետերին: Լավ հաշվարկված հրետանային համազարկերը ոչնչացրին թշնամու հրետանու զգալի մասը, որի արդյունքում թուրքական հրետանին չկարողացավ մեծ վնասներ հասցնել հարձակվող հետևազորին: Բրիտանական հրետանու անմիջական հարվածի տակ հայտնվեցին նաև թշնամու շտաբները և հեռախոսային կայանները: Հարվածի անսպասելիությունն ու ուժգնությունը այնքան մեծ էր, որ հարձակման բոլոր ուղղություններում առաջին տասը րոպեների ընթացքում գրավվեցին հակառակորդի առաջին շարքի խրամատները³²:

60-րդ դիվիզիան կարողացավ գրավել թուրքական երեք պաշտպանական գծերը և արդեն 7.30-ին բաց էր հեծելազորի ճանապարհը դեպի թշնամու թիկունք: 7-րդ դիվիզիան ժամը 7-ին գրավեց Էթ Թիրեհը, իսկ 4-րդ հեծյալ դիվիզիան և 5-րդ Ավստրալական թեթև հեծյալ բրիգադը արշավեցին դեպի Թուլկարն: Միևնույն ժամանակ 75-րդ դիվիզիան գրավեց Միսկեհը, 3-րդը՝ Հադրահի ճանապարհի բարձունքները, 54-րդը՝ Քաֆր Քասիմը և Ջևիս Թեփեն: Ֆրանսիական զորախումբը հաջողությամբ գրավեց Ռաֆաթից արևմուտք ընկած Լեռնաշղթան, ապա համառորեն պաշտպանեց Երեք բլուրների բարձունքը թշնամու հակազորի ժամանակ³³: Դա հենց Հայկական լեզեոնի գործողության ուղղությունն էր:

Շուտով հակառակորդը որոշ չափով ուշքի եկավ և փորձեց հակազորի կազմակերպել ռազմաձակատի որոշ տեղամասերում: Մի քանի դիրքերից բրիտանացիները ստիպված էին նահանջել, սակայն ժամը 11-ի մոտ բոլոր ուղղություններում թշնամու հակազորիները կասեցվեցին, և զորքերի առաջխաղացումը շարունակվեց: Թուրքական 8-րդ բանակի կենտրոն Թուլկարում բրիտանացիների ձեռքն անցան գնացքներ, մեծ քանակությամբ տեխնիկա, զենք, զինամթերք, գերիներ:

Մեկ օրում 21-րդ կորպուսի ձեռքն անցավ 7.000 գերի, 100 հրանոթ, 170 գնդացիր և հսկայական քանակությամբ այլ ռազմավար³⁴:

Մեպտեմբերի 20-ին բրիտանական հեծելազորն անցավ Մեզիդոյի կիրճը, մտավ Արմագեդոնի դաշտ և գրավեց Աֆուլան, Նազարեթը, Ջենինը, Բեյսանը: Դրանով թուրքական բանակի թիկունքում գտնվող բոլոր երկաթուղային և ճանապարհային հանգույցները հայտնվեցին բրիտանացիների վերահսկողության տակ: Այդպիսով, Պաղեստինյան ռազմաձա-

31 Տե՛ս **Cutlack F. M.**, The Australian Flying Corps, p. 152.

32 Տե՛ս **Massey W. T.**, Allenby's final triumph, p. 123, 125.

33 Տե՛ս նույն տեղում, էջ 132-134:

34 Տե՛ս **Massey W. T.**, Allenby's final triumph, p. 138.

կատի թուրքական բանակը հայտնվեց շրջապատման մեջ: Փաստորեն, 22 ժամում հեծելազորն առաջացավ ավելի քան 80 կմ: Նրանց մուտքը Նազարեթ լուսաբացին անսպասելի էր թշնամու համար: Թուրքական շտաբի բազմաթիվ սպաներ գերվեցին գիշերազգեստներով, իսկ շտաբի փաստաթղթերն անվնաս վիճակում ընկան բրիտանացիների ձեռքը: Թուրքական Պաղեստինյան բանակի հրամանատար Լիման ֆոն Սանդերսը հապճեպ հեռացավ քաղաքից: Սակայն Նազարեթն ամբողջությամբ գրավելու համար ծավալվեցին համառ մարտեր³⁵:

Մեպտեմբերի 21-ին բրիտանական հեծելազորը հաղթական երթով անցավ Նազարեթով: Փաստորեն, առանց լուրջ դժվարության բրիտանացիներին անցավ Տիբերիայից Հալֆա և Աքրա տանող ճանապարհը:

Գեներալ Չեթվիդի 20-րդ կորպուսը նույնպես հաջողությամբ կատարեց իր վրա դրված առաջադրանքը և լուրջ հարված հասցրեց թշնամուն:

Սեպտեմբերի 20-ի առավոտյան ժամը 5-ին 21-րդ կորպուսի զորքերը հարձակումը շարունակելու հրաման ստացան: Ֆրանսիական զորախումբը, որը գրավել էր Արարան և Զավիան, առաջացավ 54-րդ դիվիզիայի 163-րդ բրիգադի աջ թևով: 54-րդ դիվիզիան 7-ժամյա մարտերից հետո մոտեցավ Ազունին, ուր գերմանական «Ասիա» կորպուսի շտաբն էր տեղակայված³⁶:

Մեպտեմբերի 19-ի երեկոյան Հայկական լեգեոնի երկրորդ գումարտակը տեղափոխվել էր թիկունք, և առաջնագծում դիրքեր էր գրավել առաջին գումարտակը: Առավոտյան այն գրոհելու հրամանն ստացավ, սակայն առաջ շարժվելով պարզեց, որ հակառակորդը առանց մարտի ձողալի է, և նրա դիրքերը դատարկ են³⁷:

Մեպտեմբերի 21-ի լուսաբացին 28-րդ բրիգադն աննշան կորուստներով գրավեց Սամարիան³⁸։ Իսկ կեսօրին 5-րդ թեթև հեծյալ բրիգադը մոտեցավ Նաբլուսին, որը թուրքական 7-րդ բանակի կենտրոնն էր։ Այստեղ հեծյալ բրիգադը հանդիպեց 20-րդ կորպուսի ուժերին, որը առավտից մարտեր էր մղում քաղաքը համառոտեն պաշտպանող թշնամու դեմ։ Ի վերջո, Նաբլուսը գրավվեց։ Նահանջող թուրքական ուժերը ենթարկվեցին հրետանային և օդային ջախջախիչ ռմբակոծության։

Թուրքական 7-րդ և 8-րդ բանակներն ամբողջովին ոչնչացվեցին:

Մեպտեմբերի 23-ին գրավվեց Աբրահան³⁹: Նույն օրը համառո մարտերից հետո 13.30-ին գրավվեց Հաֆսան⁴⁰: Մեպտեմբերի 25-ին համառո մարտերից հետո գրավվեց Տիբերիա լճի հարավային ափին գտնվող Սամախ քաղաքը, որտեղով անցնում էր Աֆուլա-Դերա երկաթուղին, ապա՝ 15.30-ին, Տիբերիա քաղաքը⁴¹:

Ռազմաճակատի արևելքում գններալ Է. Չայթորսի զորքերը սեպտեմբերի 17-ից սկսեցին մեծ ակտիվություն ցուցաբերել իրենց հանձնված

35 Տե՛ս նույն տեղում, էջ 151–152:

36 Տե՛ս նույն տեղում, էջ 170:

37 Տես Պոյաճեան Տ., Հայկական լեզւոնը, էջ 123:

38 **Stu Massey** W. T., Allenby's final triumph, p. 173.

39 Տե՛ս նույն տեղում, էջ 190:

40 Տե՛ս նույն տեղում, էջ 193:

41 Նույն տեղում, էջ 198-200:

գծի արևելյան և հյուսիսային հատվածներում, որպեսզի այդ հատվածից գլխավոր հարձակման թյուր պատկերացում առաջացնեին հակառակորդի մոտ և ստիպեին այստեղ կենտրոնացնել ուժերը: Չայթորսի խնդիրն էր պաշտպանել Հորդանանի հովիտը և հարձակման գնացող 20-րդ կորպուսի աջ թևը: Թշնամու մոտ նահանջի առաջին նախանշանների դեպքում նա պետք է անմիջապես հարձակման գնար դեպի Հս Սալթ և Ամման, ուր օգնության էին գալու նաև Մեքքայի շերիֆի արաբական զորքերը: Սեպտեմբերի 19-21-ին թշնամին լուրջ ճնշում էր գործադրում Չայթորսի զորախմբի վրա: Սակայն շուտով թուրքերը տեղեկացան 7-րդ և 8-րդ բանակների ջախջախման, արաբների կողմից Դերայի գրավման մասին, որով փակվել էր նրանց նահանջի ճանապարհը: Դա խուճապ առաջացրեց 4-րդ բանակում և բարձրացրեց բրիտանական զորքերի մարտական ոգին⁴²: Սեպտեմբերի 22-ին Չայթորսի զորքերին հաջողվեց հյուսիսային ուղղության վրա գրավել Դամիեի կամուրջը Հորդանանի վրա, որով ճանապարհը Նաբլուսից ու Բեյսանից գնում էր Հս Սալթ: Հաջորդ օրը վերջնականապես գրավվեց Հս Սալթը, ուր տեղակայված էր թուրքական 4-րդ բանակի շտաբը⁴³: Բրիտանական ուժերը շարունակեցին հարձակումը և սեպտեմբերի 24-ին գրավեցին Ամմանի հյուսիսում գտնվող Այնի Սուվեյլան և արևմուտքում գտնվող Նիմրին բնակավայրերը: Սեպտեմբերի 25-ի արշալույսին սկսվեց Ամմանի գրոհը: Համառ մարտերից հետո այն վերջապես գրավվեց, և բրիտանացիների վերահսկողության տակ անցավ Հեջազի երկաթուղին⁴⁴:

Հարձակման հաջողությանը նպաստեց նաև այն, որ էմիր Ֆեյսալի արաբական բանակը սեպտեմբերի 16-ից մոտեցավ Դերային, ուր բաժանվում էր Դամասկոսից դեպի Բեյսան ու Ամման գնացող երկաթուղին: Սեպտեմբերի 17-ին արաբները գրավեցին Դերայից հյուսիս գտնվող Թել Արար կայարանը, պայթեցրին երկաթուղու մոտ 15 կմ-ոց հատված, փակեցին ճանապարհը: Սեպտեմբերի 23-ին նրանք գրավեցին Դերան⁴⁵: Արդյունքում թուրքական 4-րդ, 7-րդ և 8-րդ բանակները չկարողացան երկաթուղով օգնական ուժեր ստանալ Դամասկոսից, իսկ պարտությունից հետո չկարողացան զորքերն ու տեխնիկան տեղափոխել թիկունք:

Հետագա օրերին բրիտանացիները շարունակեցին շրջապատման մեջ մնացած թուրքական բանակի մնացորդների վնասազերծումը: Թուրքական Պաղեստինյան բանակն ամբողջությամբ ոչնչացվեց: Սպանվեցին ու գերվեցին տասնյակ հազարավոր զինվորներ: Միայն 5-6.000 զինվորների հաջողվեց փախուստի դիմել:


42 Տե՛ս **Gullett H. S.**, *The Australian Imperial Force in Sinai and Palestine, 1914-1918*, Sydney, 1941, p. 714-717.

43 Տե՛ս **Massey W. T.**, *Allenby's final triumph*, p. 208.

44 Տե՛ս նույն տեղում, էջ 211:

45 Տե՛ս **Cutlack F. M.**, *The Australian Flying Corps*, p. 162-163.

Մեզիդոյի ճակատամարտում առաջին անգամ հեծելազորը և օդուժը համատեղ, արդյունավետ համագործակցությամբ վարեցին գրեթե ամբողջ հարձակողականը: Օդուժը շարքից հանեց թշնամու կապի միջոցները, մեծ արդյունավետությամբ ոչնչացրեց թշնամու տեխնիկան և մարդուժը, հետախուզական անուրանալի ծառայություն մատուցեց հարձակվող բանակին:



Քարտեզ 2: Մեզիդոյ, 19-20 սեպտեմբեր 1918 թ.

Սեպտեմբերի 19-25-ը տեղի ունեցած Մեզիդոյի հաղթական ճակատամարտի արդյունքում Միջերկրականից մինչև Մեռյալ ծով ձգվող թուրքական ամբողջ ճակատը քայքայվեց, իսկ «Յըլդըրըմ» բանակը գլխավոր ոչնչացվեց⁴⁶:

3. Հայկական լեգեոնի մասնակցությունը ճակատամարտին

Ռաֆայթ-Արարան 350 մետր բարձրությամբ և 3 կմ ձգվող լեռ էր: Հայկական զորախումբը կանգնած էր Ռաֆայթի դիմաց, իսկ Արարայի ուղղությամբ բրիտանական 10-րդ դիվիզիայի հնդկական զորամասերն էին⁴⁷: Հայկական լեգեոնը հանձնարարություն ստացավ գրավել Ռաֆայթի բարձունքը, որը ռազմաճակատի ամենադժվար ու գրեթե անառիկ հատ-

46 Տե՛ս Պոյաձեան Ս., Հայկական լեգեոնը, էջ 153:

47 Տե՛ս նույն տեղում, էջ 142, 143:

վածներից էր համարվում: Մինչ այդ դաշնակիցների զորքերը երեք անգամ փորձել էին գրավել այդ դիրքերը, բայց թշնամին հետ էր շարտել նրանց⁴⁸: Արարայից ձախ Ռաֆաթ գյուղն էր, որի դիմաց կանգնեց սիրիական զորախումբը, իսկ այդտեղից ավելի ձախ հայկական դիրքերն էին, որոնք ձգվում էին ավելի քան 3 կիլոմետր: Դրանք երեք բլուրներ էին, որոնց վրա հակառակորդը իրար հաջորդող երեք պաշտպանական գիծ էր կառուցել: Հայկական զորախմբի 600 զինվորների դիմաց կանգնած էին 1000 թուրք և 600 գերմանացի զինվոր⁴⁹: Սեպտեմբերի 18-ի երեկոյան լեգեոնի երկրորդ գումարտակը հրաման ստացավ նախապատրաստվել հաջորդ օրվա գրոհին, որը փաստորեն առաջին լուրջ մարտական մկրտությունն էր լինելու հայ կամավորների համար: Առաջին գումարտակը ճակատամարտի ժամանակ պահեստային ուժերի մեջ էր մնալու⁵⁰:

Հայ լեգեոնականներից Շարամ Ստեփանյանը գրում է. «1918 Սեպտ. 18ի չորեքշաբթին էր՝ Արարայի նախօրեակը ... Յստակ էր երկինքը, արևը շռայլած էր իր սուր ճառագայթները չորս կողմ, զեփիւռին շունչն ալ մերթ ընդ մերթ կուգար Պաղեստինի կիզիչ արևին ազդեցութիւնը մեղմացնելու: Ամէն կողմ արագ շարժում, մեղուաջան աշխատանք, եռ ու զեռ կար. գումարտակի սենեակէն պահեստի ուտելիք, փամփուշտ, ռումբ կը բաժնուէին, տեսնուած պատրաստութիւններէն կը հասկցուէր որ մեր կողմէն յարձակողականը մօտ էր. կէսօրէն վերջ յայտնուեցաւ որ յաջորդ օրը արշալոյսին պիտի յարձակէինք թրքական դիրքերուն վրայ»⁵¹:

Երեկոն լեգեոնականներն անցկացրին երգ ու պարով: Վերջապես եկել էր վաղուց սպասված պահը, երբ պետք է վրեժ լուծելին թշնամուց: Միւսալեռցի հերոսներից Հաբեթ Իսկենդերյանն Արարայի ճակատամարտից առաջ մորը գրած նամակում նշում էր. «Պարտականութեան դաշտէն է որ կը գրեմ ձեզ այս նամակս: Թնդանօթի ծուխերու գոլորշիներուն մէջէն կը կարծեմ տեսնել Ազատ Հայրենիքիս Ազատ Արշալոյսը: Յուսամ թէ այդ օրը մօտալուտ է...»⁵²:

Հայ մարտիկներին ավելի ոգևորելու համար նրանց դիմեց լեգեոնի հայազգի սպա Զոն Շիշմանյանը. «Տղաք, գիտէք վաղը առտու մեր հարսանիքի օրն է, այն օրը, որուն բոլորս կը սպասենք: Ամէն զինուոր կազմ ու պատրաստ պէտք է ըլլայ առաւօտեան ժամը 4ին: Այս ժամը վրէժ-խնդրութեան և արդար հատուցման վսեմ ժամն է, հայրենիքի ազատութեան համար է որ պիտի մղենք նուիրական պատերազմը: Ատիկա միակ ծառայութիւնն է որ մենք պիտի կատարենք հանդէպ մեր դժբախտ ազգին ու զայն երջանկացնենք մեր արեան գնով: Չեմ գիտեր թէ վաղուան վարագոյրը երբ իջնէ, մեզմէ քանին պիտի իյնան ճակատամարտին մէջ,

48 Տե՛ս **Աձէմեան Խ.**, Հայկական լեգեոնը, «Համազգային»-ի տարեգիրք, Պէյրուֆ, 1953, էջ 73:

49 Տե՛ս Արարա: Նուիրուած Արարայի հինգերորդ տարեդարձին: Հրատարակութիւն Հայ լեգեոնական միութեան, Պոսթոն, 1923, էջ 6:

50 Տե՛ս **Լազյան Գ.**, Հայաստան և Հայ Դատը (Վաւերագրեր), Գահիրէ, 1946, էջ 192:

51 Տե՛ս Կամատրը, էջ 32:

52 Տե՛ս **Սապահ-Գիւլեան Բ.**, Կենսագրութիւն Ստեփան Սապահ-Գիւլեանի, Նիւ Յորք, 1936, էջ 138:

սակայն վստահ եմ, որ հայուն հպարտ ճակատը ամօթի մրուրը պիտի չտեսնէ, մեր անցեալը մեզի խթան և ապագան թող հաւատ ներշնչէ բոլորիս»⁵³:

Հետաքրքիր է նշել, որ թուրքերի վրա հոգեբանական ճնշում գործադրելու նպատակով հարձակման նախօրեին բրիտանական ինքնաթիռը թշնամու թիկունքում թռուցիկներ տարածեց, ուր գրված էր, որ նրանց դեմ կանգնած է 60.000-անոց հայկական բանակ⁵⁴: Փաստորեն, աշխարհի հզորագույն կայսրության ներկայացուցիչները թուրքերին վախեցնում էին ոչ թե իրենց բանակով, այլ հայկականով:

Սեպտեմբերի 19-ի արշալույսին սկսվեց ընդհանուր հարձակումը: «Մեկնելու պատրաստությունները լրանալէ վերջ,- նկարագրում է ճակատամարտի մասնակից Շ. Ստեփանյանը,- մնաք բարովը ըսինք գետնափորներուն և սկսանք իջնել դէպի մեր գիշերային խրամատները. մեռելային լռութիւն մը կը տիրէր չորս կողմը. տղաքը վերջին անգամ ձեռքի սեղմումներ կ'ընէին, կ'ողջագուրուէին. ...Զանօտան Մելքիսէթը՝ խրամատին մէջէն երկու պաշտպանողական ռումբ գտաւ. «մէկը դուն առ և միւսն ալ ես, գերի իյնալու պարագային կը գործածենք...» ըսաւ, կ'երևի գուշակած էր իր ճակատագիրը. կռուի տաք ատենները Սեոժան Առնօին գրաւոր հրահանգ մը տանելու ատեն զարնուած էր: Գումարտակին հրամանատարը՝ Տրշաւ ժամացոյցին նայեցաւ. երեքուկէսն էր, մեկնելու որոշուած ժամը. «մէկ, մէկ, անշշուկ դէպի ձորը» հրամայեց. նախ քան կռիւը սկսելը պէտք էր ձորը իջած ըլլայինք առանց թշնամիէն նշմարուելու և կամ լրտեսուելու. բարեբախտաբար այս շատ կարևոր բայց վտանգաւոր գործը յաջողութեամբ վերջացաւ. թրքական գիշերային խուզարկիչ խումբերը և երբեմնակի արձակուած լուսարձակները չյաջողեցան մեր անշշուկ և ծայր աստիճան գոյուշութեամբ դէպի ձորը երբեմն քալելով և երբեմն ալ սողոսկելով իջնելը ի յայտ բերել. ձորը հասնելէ վերջ, թուրքերը գիտցան ու սկսան կրակել. սկսաւ յարձակողականը Էսվէրին Բ. Տարտանէլ անուանած դիրքերուն վրայ, սուրաց հայլէգէոնականը թրքական բնական առաւելութիւններով օժտուած և գերմանացիներէ զօրացուած դիրքերուն վրայ՝ անարգելով տեղացող մահաբեր կրակը. խոյացաւ յառաջ «ուռաներով և քաջագործութեան անօրինակ ցոյցով վեր դէպի բլուրը»⁵⁵:

Հայկական լեգեոնը մի քանի ժամ տևած համառ մարտերից հետո կարողացավ սվինամարտով թուրքերին դուրս շարտել առաջապահ դիրքերից: «Թուրքը որ անպաշտպան և անզէն հայերը մորթելու մէջ այնքան ճարպիկութիւն և քաջութիւն ցոյց տուած էր,- գրում է ճակատամարտի մասնակից Մ. Թաթարյանը,- հայ կամաւորին զէնքին դէմ ընկրկեցաւ և իր ամրակուռ դիրքերուն առաջին գիծը լքելով անցաւ երկրորդ դիրքերուն»⁵⁶:

Ճակատամարտի մեկ այլ մասնակից լեգեոնական՝ Մ. Զարիկյանը, վերհիշում է. «Մարդկութեան հնարած բոլոր մահակները գործի էին այդ

53 Տէն Թաթարեան Մ., Կամաւորի մը յուշերը, Անթիլիաս, 1960, էջ 12-13:

54 Տէն նոյն տեղում, էջ 15:

55 Կամաւորը, էջ 33-34:

56 Թաթարեան Մ., նշվ. աշխ., էջ 15:

պահուն. թնդանօթ, գնդացիք, հրացան և ձեռնառումբերու ահռելի տեղատարափի մը ու սոսկալի պայթիւններու մէջ, լեգէոնը անվարան ու գերմարդկային մարտնչումով մը կը յառաջանար դէպի իր նպատակակէտը, որ իրեն ցոյց տրուած էր: ... Կարճ եղաւ մենամարտը ու սաստիկ. անտեղիտալի էր թրքական դիմադրութիւնը և ուժգին, բայց կորովի էր ու զարհուրելի հայ զինուորի օրհասական քաջարի գրոհը, որուն արագ ու անագորոյն հարուածներուն տակ ճարձատեցաւ բռնութեան որջը ու փլաւ ճիւղներու միջնաբերդը: Անարի թշնամին իր դէմ ցցուած վրիժառու սուիսներէն պաշտպանուելու անկարող՝ լքեց իր պաշտպանութեան բոլոր լաւագոյն դիրքերն և բռնեց լեղապատառ փախուստի ճամբան: Անցաւ Արևելեան լեգէոնը թշնամի դիակներու վրայէն ու գրաւեց այն անմատոյց լեռները, որ լրիւ վստահուած էր իրեն այդ ահեղ ճակատամարտի մէջ: Սակայն այդ դիրքերուն այնքան արագ գրաւումը կարճ պատերազմով մը, անակնկալ էր մեր թշնամոյն ու թերևս ալ անհաւանական. շատ չանցած թրք. բանակը անցաւ կատաղի հակայարձակողականի մը, ու իր քիչ առաջուայ լքած դիրքերը առաւ դժոխային կրակէ ցանցի մը տակ, յարձակեցաւ ու հարուածեց երկար ատեն ահռելի թնդանօթաձգութեամբ մը և այդ դիրքերը քարոյքանդ ըրաւ... Ի զուր էր և անօգուտ իր բոլոր ջանքերը, հայ զինուորը իր հերոսական կեցուածքով գամուեցաւ ու թաղուեցաւ իր գրաւած դիրքերու մէջ, առանց քայլ մը իսկ ետ ընկրկելու, և մօտ քսան ժամ անընդհատ տևող այս կռուի մէջ Ա. Լ.ը (Արևելյան լեգէոնը-Ս.Պ.) վերցուց իր վրայ բոլոր ծանրութիւնը թրքօգերման միացեալ ահաւոր ուժերու, և թշնամին զբաղեցուց իրմով մինչև դաշնակից ուժերու վերջնական յաղթանակը, և մինչև թրք. ճակատի ու թուրք զօրամասերու ընդհանուր քայքայումը»⁵⁷:

Շարունակելով հաջող հարձակումը՝ հայ զինվորները գրավեցին նաև պաշտպանական երկրորդ և երրորդ բնագծերը: Թուրքերը փորձեցին հակազդող կազմակերպել, բայց հայ զինվորները կասեցրին թշնամու համառ գրոհները: Հայ մարտիկների կողմից Ռաֆաթի բարձունքների գրավումը նպաստեց մոտակա Արարայի, Մեսհայի և Պետիեյի դիրքերի անձնատուր լինելուն⁵⁸:

Լեգէոնականները գերեցին թշնամու 147 զինվոր, 1 մայոր և 3 կապիտան: Թուրք մայորը զարմացավ լեգէոնականների թվաքանակը տեսնելով. «Մեր զօրքը բարոյալքուեցաւ այն օրէն, երբ անգլիական օդանաւերը թռուցիկներ թափեցին մեր վրայ, որոնցմէ ըմբռնեցինք թէ այս անգամ իրենց վրայ յարձակողները ոչ հնդիկներ, ոչ ալ ալճերիացիներ և ոչ ալ եւրոպացիներ էին, այլ՝ վրիժառու հայ գունդեր, բայց չէինք կարծեր որ այդքան սակաւաթիւ էք»⁵⁹:

Հայ լեգէոնականները ճակատամարտում տվեցին 23 սպանված և 76 վիրավոր: Զոհվածների աճյունները սեպտեմբերի 20-ին թաղվեցին թիվ 26 դիրքում՝ Ռաֆաթի բարձունքի հարավ-արևմտյան լանջին, գյուղից

⁵⁷ Կամաուրը, էջ 43:

⁵⁸ Տե՛ս Պօյաճեան Տ., նշվ. աշխ., էջ 142:

⁵⁹ Պատմութիւն Ս.Պ.Հնչակեան կուսակցութեան 1887-1963, խմբ. Ա.Կիտուր, հատ. Բ, Պէյրութ, 1963, էջ 343:

300 մետր հեռավորության վրա՝ եղբայրական գերեզմանում⁶⁰: «Մարտական խաչ» շքանշանով պարգևատրվեցին 25 լեգեոնականներ⁶¹: Արարյուն ցուցաբերած խիզախության համար շքանշաններ ստացան հայ սպաներ Վահան Փորթուգալյանը, Ջոն Շիշմանյանը, Հարություն Եսայանը, Հակոբ Արևյանը, Հակոբ Գարասեֆերյանը⁶²:

Ռաֆայել-Արարայի ձակատամարտում հայ զինվորները ցուցաբերեցին մեր ազգին պատիվ բերող մարտունակություն ու խիզախություն, որը բարձր գնահատվեց նաև գլխավոր հրամանատար Է. Ալենքիի կողմից⁶³:

4. Լիբանանի և Սիրիայի ազատագրումը

Սեպտեմբերի 26-ին Ալենքին վերադասավորեց ուժերը և շարժվեց դպի հյուսիս: Թուրքերն ամբողջովին բարոյալքվել էին, անընդունակ էին որևէ լուրջ դիմադրության: Բրիտանացիների գլխավոր խնդիրն էր գրավել Հալեպը: Մեծ Բրիտանիայի ռազմական խորհուրդը համոզված էր, որ Հալեպի գրավումից հետո թուրքերը կդադարեցնեին պատերազմը: Դա էր պատճառը, որ ռազմական խորհուրդը Է. Ալենքիին առաջարկեց հեծելազորի ուժերով հնարավորինս արագ հասնել 480 կմ հեռավորության վրա գտնվող Հալեպին: Սակայն գեներալը հրաժարվեց այդքան հեռավոր ռազմարշավ իրականացնելուց, որի արդյունքում երկար ճանապարհից հոգնած հեծելազորը ստիպված կլինեի բախվել Հալեպի թուրքական 25.000-ոց բանակին, որն այդ ընթացքում Անատոլիայից կարող էր թարմ ուժեր ստանալ: Ռազմական խորհրդում քննարկվեց նաև Ալեքսանդրետում ավիանում կատարելու և այնտեղից դեպի Հալեպ շարժվելու նախագիծ, սակայն հաշվի առնելով Դարդանելի ավիանման ձախողված փորձը՝ այն մերժվեց: Նման պայմաններում Ալենքին որոշեց ամբողջ զորքով առաջանալ, որն ավելի դանդաղ, բայց ապահով կլինեի⁶⁴: Նա որպես հեծելազորի թիրախ ընտրեց Դամասկոսը, իսկ հետևակի հիմնական ուժերը որոշեց ծովափով շարժել դեպի Բեյրութ և Տրիպոլի:

Հոկտեմբերի 1-ին բրիտանական և արաբական զորքերը կատաղի մարտերից հետո գրավեցին Դամասկոսը: Այնտեղ գերի հանձնվեց ավելի քան 20.000 թուրք զինվոր⁶⁵:

Դամասկոսում կենտրոնացած շուրջ 30.000 հայ տարագիրներն ուրախությամբ ընդունեցին ազատարար բանակին: Արդեն հոկտեմբերի 3-ին Անդրանիկ Կենճյանի ատենապետությամբ կազմվեց Ժամանակավոր ազգային վարչություն⁶⁶:

Բեյրութը գրավվեց առանց մարտերի: Դեռևս սեպտեմբերի 30-ին

60 Տե՛ս նույն տեղում, էջ 147:

61 Տե՛ս **Հարությունյան Կ.**, Ֆրանսիական բանակի Հայկական լեգեոնը 1916–1920 թվականներին, ՊԲՀ, 1999, N 2–3, էջ 107:

62 Տե՛ս Ատանայի Հայոց պատմություն, խմբագրեց՝ **Բիզանդ Եղիայեան**, Աթիլիաս, 1970, էջ 430:

63 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 131, թ. 14:

64 Տե՛ս **Massey W. T.**, Allenby's final triumph, p. 222.

65 Տե՛ս նույն տեղում, էջ 223:

66 Տե՛ս **Կենճեան Ա.**, Հայածականի յուշեր 1914–1918, Պեյրութ, 1964, էջ 146:

թուրքերն ու գերմանացիները հեռացան քաղաքից՝ նախապես ոչնչացնելով սննդի պաշարները: Քաղաքում առանց այդ էլ սով էր տիրում, և պատերազմի տարիներին տեղի բնակչության գրեթե կեսը սովամահ էր եղել: Փաստորեն Բեյրութի բնակչությունը կանգնեց ամբողջական ոչնչացման եզրին⁶⁷:

Արևելյան լեգեոնի երրորդ գումարտակը սեպտեմբերի 29-ին Ֆամագուստայից բրիտանական «Պըրկըն» նավով շարժվեց ռազմաձակատ: Հաջորդ օրը նրանց տեղափոխող նավը կանգ առավ Հայֆայի նավահանգստի մոտ: Հոկտեմբերի 1-ին հայ զինվորները ափ դուրս եկան Բեյրութի նավահանգստում: Տեղի բնակչությունը խանդավառությամբ ընդունեց ազատարար զինվորներին՝ նրանց ձանապարհը պատելով ծաղիկներով: Հայ զինվորները հաստատվեցին գորանոցի վերածված Ֆրանսիական համալսարանի տարածքում: Սպայակույտը տեղավորվեց շենքում, իսկ զինվորների համար վրաններ խփվեցին բակում⁶⁸:

Հոկտեմբերի 7-ին, երբ բրիտանական հետախուզական ուժերը հասան Բեյրութ, պարզեցին, որ այն արդեն ազատագրված է⁶⁹: Ինչպես տեսնում ենք, **Կիպրոսից ժամանած հայկական լեգեոնի երրորդ գումարտակը դաշնակցային առաջին զորախումբն էր, որը ոտք դրեց Բեյրութ:**

Հոկտեմբերի 10-ին Բեյրութ հասան Արևելյան լեգեոնի առաջին և երկրորդ գումարտակները: Նրանք չափազանց հոգնած էին երկարատև ձանապարհից, զգալի մասը հիվանդ էր: Դա բավական տխուր տպավորություն թողեց նրանց որպես հաղթողների ոգևորությամբ դիմավորելու եկած երրորդ գումարտակի զինվորների վրա: Բեյրութի բոլոր գլխավոր կետերի վերահսկողությունն անցավ հայ զինվորներին⁷⁰:

Ծովափի երկայնքով շարժվող 7-րդ հետևակային դիվիզիան հոկտեմբերի 18-ին գրավեց Տրիպոլին⁷¹:

Ալենքին որոշեց Հալեպին մոտենալ երեք փուլերով: Գրավել լիբանանյան Ռայակ քաղաքը, հետո՝ Հոմսը, ապա՝ գրոհել Հալեպը⁷²:

Ռայակը գտնվում էր Դամասկոսից մոտ 65 կմ հեռավորության վրա: Այն տրանսպորտային հանգույց էր, ուներ խոշոր օդանավակայան, այստեղ էին թուրքական հիմնական պահեստները, գերմանական ու թուրքական բավական մեծ ուժեր էին կենտրոնացված: Հոկտեմբերի 6-ին բրիտանական զորքերը մտան Ռայակ: Թուրքերն առանց դիմադրության, նախորդ օրը հեռացել էին քաղաքից՝ այրելով իրենց 32 ինքնաթիռները⁷³: Հոկտեմբերի 15-ին բրիտանական զորքերը մտան Հոմս: Այստեղ ևս թուրքերն առանց որևէ դիմադրության նահանջեցին⁷⁴: Հոկտեմբերի 19-ին բրիտանական զորքերը շարունակեցին հաղթարշավը Հոմսից հյուսիս: Հոկտեմբերի 21-ին բրիտանական օդուժը ռմբակոծեց Համա քաղաքը:

67 Տե՛ս Massey W. T., Allenby's final triumph, p. 283.

68 Տե՛ս Աձէմեան Խ., Էջեր կամաւորի օրագրէս, Պէյրութ, 1967, էջ 132-138:

69 Տե՛ս Gullett H. S., The Australian Imperial Force, p. 776-777.

70 Տե՛ս Աձէմեան Խ., Էջեր կամաւորի օրագրէս, էջ 140-141:

71 Տե՛ս Massey W. T., Allenby's final triumph, p. 320.

72 Տե՛ս Նույն տեղում, էջ 289:

73 Տե՛ս Cutlack F. M., The Australian Flying Corps, p. 169.

74 Տե՛ս Massey W. T., Allenby's final triumph, p. 299.

Հաջորդ օրը թուրքերը նահանջեցին Համայից⁷⁵:

Ալենքին որոշեց Հալեպը գրավել հոկտեմբերի 26-ին: Նույն օրը սպա-վում էր, որ ֆրանսիական նավատորմն ափհանում կկատարեր Ալեքսանդ-րետում: Ֆրանսիացիները ցանկանում էին սեփական ուժերով գրավել Ալեքսանդրետը և Փարիզից հրահանգեցին Սիրիայի ֆրանսիական նա-վատորմի հրամանատար ծովակալ Վարնեյին՝ գրավելու այդ նավա-հանգիստը: Հոկտեմբերի 15-ին Բեյրութում Վարնեյը այդ մասին տեղե-կացրեց Ալենքին: Վերջինս տվեց իր համաձայնությունը, որ Ալեքսանդ-րետը գրավվի ֆրանսիական և հայկական զորքերի միջոցով: Սակայն թուրքերը նոր համալրումներ ստացան, ականապատեցին Ալեքսանդրետի ծովածոցը և հրետանային կրակով հետ մղեցին ֆրանսիական նավա-տորմին⁷⁶:

Հոկտեմբերի 23-ին բրիտանական առաջապահ զորքերը մոտեցան Հալեպին: 5-րդ հեծելազորային դիվիզիայի հրամանատար գեներալ-մայոր Հ. Մականդրյուն առավոտյան ժամը 10-ին պատվիրակ ուղարկեց քաղաք՝ պահանջելով հանձնվել առանց դիմադրության: Թուրքերը միայն ժամը 5-ին պատասխանեցին՝ մերժումով: Մականդրյուն որոշեց դիր-քավորվել և սպասել հիմնական ուժերի ժամանմանը, որոնք պետք է տեղ հասնեին հոկտեմբերի 25-ին, որպեսզի դրա հաջորդ օրը սկսեին գրոհը: Արաբական զորքերը էմիր Նասիրի գլխավորությամբ հոկտեմբերի 25-ին մոտեցան քաղաքին, և նրանց մի մասը գիշերով մտավ Հալեպ, ուր ապստամբության պատրաստ մեծ թվով արաբներ կային: Հոկտեմբերի 26-ի առավոտյան ժամը 6-ին սկսվեց բրիտանական և արաբական զորքերի գրոհը: Թուրքերը որոշ դիմադրությունից հետո ստիպված էին հանձնել Հալեպը⁷⁷:

Ինչպես և սպասվում էր, Հալեպի անկումից հետո թուրքերը հաշտու-թյուն խնդրեցին: Մինչ այդ բրիտանական ուժերին հաջողվեց գրեթե ամ-բողջությամբ ոչնչացնել Պաղեստինում, Լիբանանում և Սիրիայում կենտ-րոնացված թուրքական բանակները: Թուրքերը տվեցին հսկայական թվով զոհեր ու գերիներ: Սեպտեմբերի 19-ից մինչև զինադադարի կնքումը բրի-տանացիների ձեռքն է ընկել 75.000 գերի, այդ թվում՝ 3.700 գերմանացի ու ավստրիացի, 360 հրանոթ, 800 գնդացի, 210 բեռնատար և 50 մարդատար մեքենա, 90 շոգեքարշ, 470 վագոն, 3.700 բեռնակիր անասուն և այլ ռազ-մավար⁷⁸:

Հոկտեմբերի 31-ին կնքված Մուդրոսի զինադադարով ռազմական գոր-ծողությունները դադարեցին:

75 Տե՛ս նույն տեղում, էջ 302:

76 Տե՛ս նույն տեղում, էջ 302-303:

77 Տե՛ս նույն տեղում, էջ 307-309:

78 Տե՛ս Gullett H. S., The Australian Imperial Force, p. 783.

Վերջաբան

Ինչպես տեսնում ենք, Առաջին աշխարհամարտի վերջնափուլում բրիտանա-թուրքական բանակների բախման գլխավոր թատերաբեմը Պաղեստինյան ռազմաճակատն էր: Եգիպտական ռազմարշավային զորքերի գլխավոր հրամանատար, գեներալ Է. Ալենբիին հաջողվեց իրականացնել փայլուն ռազմագործողություն. Մեգիդոյի ճակատամարտի արդյունքում ամբողջությամբ ոչնչացվեց Պաղեստինում, Լիբանանում և Սիրիայում տեղակայված թուրքական զինուժը, և ազատագրվեցին այդ երկրները: Ռազմագործողության հաջողությանը նպաստեցին հեծելազորի և ավիացիայի սերտ համագործակցությունը ողջ ճակատամարտի ընթացքում, որը բացառիկ երևույթ էր Առաջին աշխարհամարտում, ինչպես նաև հարձակման գլխավոր ուղղության գաղտնիությունն ու հարվածի հզորությունը: Ալենբին Մեգիդոյի հաղթական ճակատամարտից հետո ստացավ Մեգիդոյի կոմս տիտղոսը: Հաղթանակի գործում որոշակի մասնաբաժին ունեցան նաև Ֆրանսիական զորախմբի կազմում ընդգրկված Արևելյան լեգեոնի հայ կամավորները, որոնք ձգտում էին վրեժ լուծել թուրք ցեղասպաններից և հնարավորինս շուտ ազատագրել Կիլիկիան ու Հայաստանը: Հայկական զինուժը մասնակցեց ճակատամարտին Ռաֆաթ-Արարա տեղամասում, ապա՝ Բեյրութի ազատագրման գործողություններում: Այդ ամենի արդյունքում Թուրքիան ստիպված էր Մուդրոսի զինադադարով կապիտուլյացիայի ենթարկվել և դուրս գալ պատերազմից:

Սամվել Ա. Պողոսյան–գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է Հայկական հարցի պատմությունը: Հրատարակել է 2 մենագրություն. «Պողոս Նուբար. ազգային գործիչը», Եր., 2004, «Հայոց ցեղասպանությունը. պատճառները. ընթացքը, հետևանքները», Եր., 2005 և 40-ից ավելի գիտական հոդվածներ:

Summary

BATTLE OF MEGIDDO END ARMENIAN LEGION

The destruction of Turkish army in Palestine, Lebanon and Syria in autumn 1918

Samvel A. Poghosyan

One of the major hostilities of World War I was the Battle of Megiddo in September 1918. It went down in military history as a specific battle, where it became possible to preserve absolute confidentiality of the offensive's directions, transfer of the troops; it was secured a close cooperation with the aviation and cavalry. The Armenian Legion, who fought under the French flag, participated and played a significant role in the victory of that battle. British

General Allenby carried out the operation successfully, which led to the complete destruction of Turkish forces in Palestine, Lebanon and Syria and the regions have been liberated. As a result, the Ottoman Empire had to capitulate.

РЕЗЮМЕ

БИТВА ПРИ МЕГИДДО И АРМЯНСКИЙ ЛЕГИОН

Уничтожение Турецкой армии в Палестине, Ливане и Сирии осенью 1918 года

Самвел А. Погосян

Одним из важных военных действий Первой мировой войны была битва при Мегиддо в сентябре 1918 года. Она вошла в военную историю как уникальная битва, где удалось сохранить полную конфиденциальность направления наступления войск; было обеспечено тесное сотрудничество с авиацией и кавалерией. Армянский легион, который воевал под французским флагом и сыграл определенную роль в победе этой битвы. Британский генерал Алленби успешно провел операцию, что привело к полному уничтожению турецких войск в Палестине, Ливане и Сирии. В результате Османской империи пришлось капитулировать.